«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
Տնօրեն պարոն Լ.Բեգլարյանին

«Հայաստանի հեռուստատեսային և
ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը)

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
(իրավաբանական հասցե)

գլխ. տնօրեն Մ. Միլիտոնյան
(տնօրենի անուն ազգանուն)

հեռ

# Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ Ձեզ իրականացնել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին պատկանող ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում գտնվող կաթսայատան և վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննությունը

Դիմող՝ ____________ (ստորագրություն) Մ. Միլիտոնյան (անուն,ազգանուն)

Կ.Տ. «13» «12» 2019 թ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № Փ/350-19

ք.Երևան «13» դեկտեմբերի 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Միլիտոնյանի, այսուհետ «Պատվիրատու», որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Բեգլարյանի, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, որը գործում է ՀՀ օրենսդրության և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն Պայմանագրով կատարողը պարտավորվում է՝ տեխնիկական անվտանգության փորձաքննություն/ այսուհետ Ծառայություն/ իրականացնել և տալ փորձագիտական եզրակացություն (փորձագիտական եզրակացությունը տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում կազմվող փաստաթուղթ է, որի մեջ ամփոփվում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վիճակը բնութագրող վերլուծություններ, հետևություններ և եզրահանգումներ)՝ շահագործվող մեքենա-սարքավորումների, տեխնիկական միջոցների, տեխնոլոգիական սարքավորումների, արտադրական վտանգավոր օբյեկտի (ԱՎՕ) շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր), տեխնիկական անվտանգության վկայագրի, շահագործվող կամ գործարկման ենթակա ԱՎՕ-ների շենքերի, շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ (տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվող օբյեկտը / օբյեկտները ներկայացվում է ստորև աղյուսակում),

| | արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործողի անվանումը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ | | | | | |
| № | Օբյեկտի գտնվելու վայրը | Փորձաքննության օբյեկտը ( ԱՎՕ) | Տվյալներ | քանակ | Միավորի գին | Ընդամենը դրամ |
| 1. | ՀՀ. Ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | Վերելակ | 3/1-0075/1<br>3/1-0075/2 | 2 | 20 000 | 40000 |
| 2. | ՀՀ. Ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | կաթսայատուն | 3/1-0075 | 1 | 40 000 | 40000 |
| Ընդամենը դրամ՝ | | Ութսուն հազար | | | | 80 000 |

իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ Ծառայության համար:

1.2. Կատարողն իր որոշմամբ նշանակում է սույն Պայմանագրի 1.1. կետով սահմանված Ծառայության մատուցումն ապահովող փորձագետ կամ փորձագիտական խումբ/ այսուհետ՝ Փորձագետ/, որը Կատարողի հետ համապարտ պատասխանատվություն են կրում Փորձագետի կողմից տրված եզրակացության հավաստիության համար:

1.3. Կատարողի կողմից սույն Պայմանագրի 1.1. կետով սահմանված Ծառայությունը մատուցվում է սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո առավելագույնը «_90_» աշխատանքային օրվա ընթացքում:

1.4. Պատվիրատուի և Կատարողի փոխադարձ համաձայնությամբ Ծառայությունը կարող է մատուցվել պայմանագիրը կնքելուց հետո Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում:

1.5. Ծառայության իրականացման դիմաց վճարի չափը,վճարման կարգը և ձևը որոշվում են սույն Պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել Պատվիրատուի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել Կատարողի կողմից Ծառայության իրականացման արդյունքում Պատվիրատուին տրամադրվող եզրակացության բովանդակության վրա:

1.6. Ծառայության իրականացումը Կատարողի կողմից ավարտված, իսկ սույն Պայմանագիրը կատարված է համարվում փորձագիտական եզրակացությունն ու հաշիվ ապրանքագիրը Պատվիրատուին ներկայացնելու պահից:

## 2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայություն մատուցել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճ որակով, սույն պայմանագրում նշված ժամկետում.

2.1.2 Ծառայության մատուցման ավարտից հետո եզրակացության մեկ օրինակը հանձնել Պատվիրատուին:

2.2.Կատարողը իրավունք ունի՝

2.2.1. Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել՝

ա. <Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի <բ> կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանն առնչվող փաստաթղթերը /հրամաններ, կարգադրություններ ,պայմաններ և այլն/:

բ. Արտադրական վտանգավոր օբյեկտի շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերը,
գ. արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագիրը,
դ. արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական սարքավորումների անձնագրերը, փորձարկման ակտերը, հավաստագրերը,
ե. տեխնիկական կանոնակարգերը (ռեգլամենտները),
զ. Այլ նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերը.
2.2.2. Սույն Պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում անարգել մուտք գործել արտադրական վտանգավոր օբյեկտի տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ:
2.3. Պատվիրատուն պարտավոր է՝
2.3.1. Ծառայության մատուցման համար Կատարողին վճարել սույն Պայմանագրի 3.1-րդ կետում նշված գնին համապատասխան գումար՝ 3.2-րդ կետով սահմանված ժամկետի ընթացքում.
2.3.2. Ծառայության մատուցման ընթացքում Փորձագետին տրամադրել սույն Պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պահանջվող փաստաթղթերը.
2.3.3. Ծառայության մատուցման ընթացքում Փորձագետին ապահովել անհատական պաշտպանության միջոցներով և Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով.
2.3.4. Ծառայության մատուցման ընթացքում Փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել արտադրական վտանգավոր օբյեկտի տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ.
2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.4.1. Ծառայության մատուցման ընթացքում, Ծառայության մատուցմանը մասնակից դարձնել <Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի <բ> կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանը:
2.4.2. Փորձագետից պահանջել իրեն տրամադրել փորձագիտական եզրակացության օրինակը:

3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրի գինը կազմում է 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:
գումարը թվերով / գումարը տառերով

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ Օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողը իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
3.2. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ Պայմանագիրը կնքելուց հետո 15(տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետը չպահպանելու դեպքում, պատվիրատուն պարտավոր է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել պայմանագրով նշված գումարի 0.1% -ի չափով տույժ:
3.3. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը սույն Պայմանագիրը կնքելուց հետո 2(երկու) ամսվա ընթացքում չվճարելու դեպքում սույն Պայմանագիրը համարվում է լուծված, իսկ Պատվիրատուի գործողությունները համարվում են պայմանագրային պարտավորություններից հրաժարում:
3.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կողմ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելու դեպքում, պարտավոր է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գնի 20% (քսան) վճարել մյուս կողմին՝ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելուն հաջորդող 5 (հինգ) օրվա ընթացքում, բացառությամբ, եթե հրաժարումը կապված է մյուս կողմի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:
3.5.Կատարողի կողմից փորձագիտական եզրակացությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ ոչ պատշաճ տրամադրելու դեպքում, Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից այդպիսի պահանջներ կայացնելուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում վերջինիս հետ վճարել Պայմանագրի գինը:

4.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը և այլն,որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքնչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5.Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

6.Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչ Կողմերի պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:
6.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և կնքված են կողմերի, կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
6.3. Սույն պայմանագրից ծագած կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակնդեմ պարտավորության հաշվանցումով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:
6.4. Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
6.5 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ | «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ք.Երևան, Ազատության պող. 24- 306 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | հ/հ 163058801172 |
| հ/հ 1570027609970100 | «ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ, |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 00144521 |
| | Հեռ.՝ 010-20-37-39, 091(055) 36-17-14 |
| | Էլ փոստ: texno.armenia@gmail.com |

Գլխ. տնօրեն ______________________ Մ. Միլիտոնյան
ստորագրություն
Կ.Տ

Տնօրեն ______________________ Լ. Բեգլարյան
ստորագրություն
Կ.Տ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 350

Տեղեկատվության գաղտնիության պահպանման վերաբերյալ

ք.Երևան

«13» դեկտեմբերի 2019 թ.

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն»ՍՊԸ-ն, գործող կանոնադրության հիման վրա ի դեմս տնօրեն Լեոնիդ Ֆուզանի Բեգլարյանի (հետագայում «Կատարող»), մի կողմից և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Միլիտոնյանի (հետագայում «Պատվիրատու») մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Սույն համաձայնագրով կողմերը պայմանավորվում են պահպանել ՀՏՍ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ստանդարտի 4.2 կետում և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի որակի ձեռնարկի 4.2 կետում վկայակոչված տեղեկատվության գաղտնիության պահպանումը՝ այն է

- «Պատվիրատուն» ի դեմս ներքոստորագրյալի պատասխանատվություն է կրում տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի աշխատանքների իրականացման ընթացքում ձեռք բերված կամ ձևավորված տեղեկատվության կառավարման և գաղտնիության պահպանման համար:
- Եթե «Պատվիրատուն» օրենքով կամ պայմանագրային պարտավորություններով պարտավոր է հրապարակել գաղտնի տեղեկատվություն, ապա «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն»ՍՊԸ-ն այդ մասին նախապես ծանուցում է՝ բացառությամբ այն,դեպքերի երբ օրենքով արգելվում է:
- Այլ աղբյուրներից «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն»ՍՊԸ-ի գործունեության ոլորտին առնչվող ձեռք բերված տեղեկատվությունը «Պատվիրատու»-ի համար նույնպես համարվում է գաղտնի և ենթակա է պահպանման նույն կերպ, ինչպես և ուղղակի իր ինֆորմացիան:
- «Կատարողը» պատասխանատվություն է կրում տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի աշխատանքների իրականացման ընթացքում ձեռք բերված կամ ձևավորված տեղեկատվության կառավարման և գաղտնիության պահպանման համար:
- Եթե «Կատարողը» օրենքով կամ պայմանագրային պարտավորություններով պարտավոր է հրապարակել գաղտնի տեղեկատվություն, ապա հաճախորդն այդ մասին նախապես ծանուցում է՝բացառությամբ այն,դեպքերի երբ օրենքով արգելվում է:
- Այլ աղբյուրներից իր հաճախորդների մասին գործունեության ոլորտին առնչվող ձեռք բերված տեղեկատվությունը «Կատարողի» համար նույնպես համարվում է գաղտնի և ենթակա է պահպանման նույն կերպ, ինչպես և ուղղակի իր հաճախորդից ստացված ինֆորմացիան:
- Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- Սույն համաձայնագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակից,մեկը «Պատվիրատուի» համար, մյուսը «Կատարողի»,որից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ:
- Սույն համաձայնագիրը հանդիսանում է թիվ № Փ/350-19 պայմանագրի անբաժանելի մասը:

«Պատվիրատու»

(ստորագրություն)

«Կատարող»

(ստորագրություն)

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017թ-ի հուլիսի 18-ի № 356-Ն հրամանի

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
ՀՎՀՀ 00144521
«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ,
հ/հ 163058801172

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 350
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«20» «12» 2019թ.

Պայմանագրի/այսուհետ՝ Պայմանագիր/անվանումը՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ–ի կարիքների համար արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացում:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «13 » «12» 2019թ.
Պայմանագրի համարը՝ Փ/350-19
Պատվիրատուն՝ ի դեմս «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ -ի գլխ. տնօրեն Մ. Միլիտոնյանի, և Կատարողը՝ ի դեմս «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Բեգլարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ կազմված՝տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունը այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը/ հհ դրամ | Վճարման ժամկետը / ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն | Արտադրական վտանգավոր օբյեկտի (ԱՎՕ) շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերի, տեխնիկական անվտանգության վկայագրի, շահագործվող կամ գործարկման ենթակա ԱՎՕ-ների շենքերի, շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխանությունը: | Վերելակ կաթսայատուն | Վերելակ կաթսայատուն | 13.12.2019 | 13.12.2019 | 80 000 | 2019թ. |
| | Ընդամենը՝ | Ութսուն հազար ՀՀ դրամ | | | | | 80 000 | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
Կ.Տ.

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 19 | Դեկտեմբեր | 2019 թ. | Բ | 9390216335 |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | | | |
| 19 | Դեկտեմբեր | 2019 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 13 Դեկտեմբեր, 2019 թ. | Փ/350-19 |

| |
|---|
| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
| |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար |
| |

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 4 4 5 2 1 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [10] Անվանումը | «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [11] Բանկային տվյալները | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/ճ | N 163058801172 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Հասցե՝ Ազատության 24 | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 1 8 9 8 | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 1 8 9 8 / 1 | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [17] Բանկային տվյալները | «Ամերիաբանկ» ՓԲԸ | N 1570027609970100 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |

| [20] Ում միջոցով | | |
|---|---|---|
| Անուն, ազգանուն | | |
| Լիազորագիր | Համար | |
| | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ԱՎՕ տեխնիկական անվտանգության փորձաքննություն | հատ | 1 | 80000 | | 80000 |
| Ընդամենը | | | | | | 80000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SARGSYAN ANI 7807920173

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/12/2019 13:26:36

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ PETROSYAN BELA 6405650081

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

21/12/2019 09:20:52